ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխության մասին

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար արխիվացման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԾՁԲ-19/13» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2019 թվականի նոյեմբերի 14-ին կնքված N ԴԴ-ԳՀԱՇՁԲ-19/13 պայմանագրում 2019 թվականի դեկտեմբերի 13-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝

Կատարողի առաջարկությամբ ծառայության մատուցման ժամկետը երկարաձգվել է:

Փոփոխության նկարագրություն՝

«Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» վերտառությամբ Հավելված N 1-ում ««Ծառայության» «մատուցման» **«ժամկետը»**» սյունակում 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով «30 օրացուցային օրվա ընթացքում» բառերը փոխարինվել է «մինչև 2019 թվականի դեկտեմբերի 25-ը» բառերով:

Փոփոխության հիմնավորում՝

Պայմանագրի 7.5, 7.6 կետեր:

Պատվիրատու՝ **Դատական դեպարտամենտ**

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՐԽԻՎԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ 14.11.2019թ. ԿՆՔՎԱԾ N «ԴԴ-ԳՀԾՁԲ-19/13» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան «13» դեկտեմբերի 2019թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավար Կ. Փոլադյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ» ՊՈԱԿ-ն, ի դեմս տնօրեն Ա. Վիրաբյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները, և հիմք ընդունելով 14.11.2019թ. կնքված N «ԴԴ-ԳՀԾՁԲ-19/13» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.6 կետերը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կողմերը որոշեցին Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման ժամկետը երկարաձգել, ինչով պայմանավորված՝ «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» վերտառությամբ Հավելված N 1-ում ««Ծառայության» «մատուցման» **«ժամկետը»»** սյունակում 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով «30 օրացուցային օրվա ընթացքում» բառերը փոխարինել «մինչև 2019 թվականի դեկտեմբերի 25-ը» բառերով:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Դատական դեպարտամենտ	*«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ» ՊՈԱԿ*
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5	Հասցե՝ ք. Երևան, Հր. Քոչար 5/2
Հ/Հ՝ 900011192151	Հ/Հ՝ 900018002080
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՎՀՀ՝ 00078217
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Ղեկավար՝ Կ. Փոլադյան	**Տնօրեն՝ Ա. Վիրաբյան**
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	